



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Առինջ  
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ Մաշտոցի  
փողոց 51, Հեռ. (010) 61 45 01, E-mail arinj-  
hamaynk@mail.ru, arinj.kotayq@mta.gov.am

N 233  
20 մարտի 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ ԴՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում համայնքի ղեկավարի 2020թվականի թիվ199-Ա-ից մինչև 241-Ա որոշումները:

Առդիր 46 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Կապ. Գլխավոր մասնագետ՝ Ն. Համբարձումյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru , arinj.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2020թվականի N 199-Ա

#### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020թվականի փետրվարի 26-ի N64-Ա որոշման պահանջները՝  
**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

#### 1. Հաստատել

- 1/Կոտայքի մարզի Առինջ համայնքի տարածքում 2020թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N1 հավելվածի,  
2/առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N3 հավելվածի:  
2. Մինչև 2020թվականի մարտի 16-ը ներառյալ Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել սույն որոշմամբ հաստատված հավելվածները:  
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020 թ. մարտի 10  
գ.Առինջ



ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ  
ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ  
ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| Հ/Հ                       | Միջոցառումների անվանումը                                                                                                                                                                                           | Կատարող          | Կատարման ժամկետը        |
|---------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|-------------------------|
| 1.                        | 2.                                                                                                                                                                                                                 | 3.               | 4.                      |
| 1. Հիմնական միջոցառումներ |                                                                                                                                                                                                                    |                  |                         |
| 1.                        | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգերի, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Համայնքի ղեկավար | Մշտական                 |
| 2.                        | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:                                                                                                | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 3.                        | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:                                        | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 4.                        | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:                                                                                                       | Համայնքի ղեկավար | Ըստ անհրաժեշտության     |
| 5.                        | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաջայնությամբ) ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:           | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Առինչ համայնքի հակահեղեղային կառույցների (Կառույցի) հաշվառման

| Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ) | Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառած) | Կառույցի                |                        |                       |                                | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը(բալ) | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար անբավարար) |
|------------------------------------------------------|----------------------------------------------------|-------------------------|------------------------|-----------------------|--------------------------------|----------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------|
|                                                      |                                                    | երկարության թյունը (մ.) | լայնության թյունը (մ.) | հորության թյունը (մ.) | Կողմերի թեքության աստիճանը (°) |                                              |                                                                                                              |                                                |
| 2.                                                   | 3.                                                 | 4.                      | 5.                     | 6.                    | 7.                             | 8.                                           | 9.                                                                                                           | 10.                                            |
|                                                      | 0                                                  | 0                       | 0                      | 0                     | 0                              | 0                                            | 0                                                                                                            | 0                                              |
|                                                      |                                                    |                         |                        |                       |                                |                                              |                                                                                                              |                                                |
|                                                      |                                                    |                         |                        |                       |                                |                                              |                                                                                                              |                                                |
|                                                      |                                                    |                         |                        |                       |                                |                                              |                                                                                                              |                                                |
|                                                      |                                                    |                         |                        |                       |                                |                                              |                                                                                                              |                                                |
|                                                      |                                                    |                         |                        |                       |                                |                                              |                                                                                                              |                                                |

Առինչ համայնքի ղեկավար

համայնքի անվանումը

Գ. Սարգսյան

անուն, ազգանուն

ստորագրություն



## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Առինջ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

|                                                                                                                                                                                 |                                                                                                                 |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. Վտանգի (աղետի) անվանումը(ները)                                                                                                                                               | սելավ                                                                                                           |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)                                                                                                                                       | գ. Առինջ, «Ա» , Խ. Արույան և Պ. Սևակի թաղամասեր                                                                 |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները                                                                                                                                                | ձնհալ, հորդառատ անձրևներ                                                                                        |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը:<br>Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը                                                                  | Վտանգավոր տեղամասերը սակավ բնակեցված են, չունեն կոյուղի:<br>Վտանգավոր շենքերի քանակը-70, բնակչության թիվը՝ 170: |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար                                                                                                            | Համաձայն միջոցառումների պլանի                                                                                   |
| 6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020թ.-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների: | փրկարար ծառայություն 200000դրամ<br>քաղ. պաշտ. -200000 դրամ<br>քաղ. պաշտ. /այլ դաս. չպատկ./-200000դրամ           |

Առինջ համայնքի ղեկավար

Գ.Գ. Սարգսյան  
(Ա.Ա.Հ.)



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 200-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Արտակ Հենրիկի Ղազարյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Արտակ Հենրիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Խաչատուր Աբովյան թաղամաս 9-րդ փողոց թիվ3 հասցեում գտնվող հողամասի բաժանումից առաջացած մնացորդային մասին S=433.9քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 9-րդ փողոց թիվ 3 հասցեն, բաժանվող մասին 1-ին S=239.1քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ3 հասցեն,բաժանվող մասին 2-ին S=242.9քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ5 հասցեն, բաժանվող մասին 3-ին S=234.6քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ7 հասցեն, բաժանվող մասին 4-ին S=224.8քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ9 հասցեն,բաժանվող մասին 5-ին S=215,4քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ11 հասցեն,բաժանվող մասին 6-ին S=213.0քմ մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Խաչատուր Աբովյան թաղամաս 2-րդ փողոց 3-րդ փակուղի թիվ13 հասցեն:

2.Արտակ Հենրիկի Ղազարյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշման ուժի մեջ է մտնում Արտակ Հենրիկի Ղազարյանը որոշման մասին կազմակերպելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 201-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Դիանա Կարապետի Գաբրիելյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Դիանա Կարապետի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող գ.Առինջ Միեր Մկրտչյան թաղամաս 15-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող 0.1000 հա հողամասը /հիմք սեփ.վկայական N 2810698/ վերահասցեավորել Առինջ համայնք Միեր Մկրտչյան թաղամաս 12-րդ փողոց թիվ4 (կադաստրային ծածկագիր 07-011-0346-0058):

2.Դիանա Կարապետի Գաբրիելյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիանա Կարապետի Գաբրիելյանին որոշման մասին իրազեկելու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 202-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Արտակ Հովհիկի Հարությունյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Արտակ Հովհիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող Միեր Մկրտչյան թաղամաս 4-րդ փողոց թիվ9 հասցեում գտնվող հողամասի բաժանումից առաջացած  $S_1=0.085097$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Միեր Մկրտչյան թաղամաս 4-րդ փողոց թիվ 9 հասցեն,  $S_2=0.079481$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Միեր Մկրտչյան թաղամաս 4-րդ փողոց թիվ9/1 հասցեն,  $S_3=0.135422$ հա մակերեսով հողամասին տրամադրել Առինջ համայնք Միեր Մկրտչյան թաղամաս 4-րդ փողոց թիվ9/2 հասցեն:

2.Արտակ Հովհիկի Հարությունյանը պարտավոր է Առինջ համայնքի 900105204367 հաշվեհամարին վճարել հասցեի տրամադրման ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Հովհիկի Հարությունյանին որոշման մասին իրազեկելու օրը:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Իշխանի Հովսեփյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 203-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 8-Ի N199-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի,  
<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի  
դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2020թվականի փետրվարի  
20-ի N57-Ա որոշումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման  
հանձնաժողովներ հետևյալ կազմով՝

Գագիկ Սարգսյան - համայնքի ղեկավար

Նելլի Մխիթարյան - ավագանու անդամ

Լաուրա Միրզոյան-ավագանու անդամ

Սերոբ Կարապետյան- ավագանու անդամ

Արտավազ Բարսեղյան-մարզպետարանի ներկայացուցիչ

Հարություն Ալեքսանյան- մարզպետարանի ներկայացուցիչ

Սամվել Սահակյան - մարզպետարանի ներկայացուցիչ

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 8-ի

<<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով  
կազմավորելու և համայնքի ղեկավարի 2016թվականի նոյեմբերի 28-ի N364-Ա  
որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N199-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում և ստորագրման օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 204-Ա

**ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ,  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ՀՈՒՍԻԿ ԳԵՐԱՍԻՄԻ  
ԴԱԼԱՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Հուսիկ Գերասիմի Դալաքյանի (ծնված 1963թ) դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, պարիսպը և դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Վերականգնել Առինջ համայնքի 15-րդ փողոց թիվ11/1 հասցեում գտնվող քաղաքացի՝Հուսիկ Գերասիմի Դալաքյանին սեփականության իրավունքով պատկանող 0,0800 հա մակերեսով օրինական տնամերձ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված S=194.50 քմ մակերեսով բնակելի տան և S=13.04 քմ մակերեսով պարսպի և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 0,001394 հա մակերեսով հողամասի սեփականության իրավունքները:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝Հուսիկ Գերասիմի Դալաքյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան և պարսպի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Իշխանի Հովսեփյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 205-Ա

### ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ8/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ՌՈՂԱ ԿԱՐԱՊԵՏԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Ռոզա Կարապետի Ժամհարյանի (ծնված 1952 թ) դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարիսպը և դրա կառուցման \*և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Վերականգնել Առինջ համայնքի 13-րդ փողոց թիվ 8/1 հասցեում գտնվող գտնվող քաղաքացի՝ Ռոզա Կարապետի Ժամհարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,0800 հա մակերեսով օրինական տնամերձ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված S=16.68 քմ մակերեսով պարսպի և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 0,008776 հա մակերեսով հողամասի սեփականության իրավունքները:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Ռոզա Կարապետի Ժամհարյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի և պարսպի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Իշխանի Հովսեփյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 206-Ա

**ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ՌՈՋԱ ԿԱՐԱՊԵՏԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Ռոզա Կարապետի Ժամհարյանի (ծնված 1952թ) դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, պարիսպը և դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Վերականգնել Առինջ համայնքի 15-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող քաղաքացի՝ Ռոզա Կարապետի Ժամհարյանի սեփականության իրավունքով պատկանող 0,079398հա մակերեսով օրինական տնամերձ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված S=369.09քմ մակերեսով բնակելի տան և S=12.08 քմ մակերեսով պարսպի սեփականության իրավունքները:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝Ռոզա Կարապետի Ժամհարյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան և պարսպի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Իշխանի Հովսեփյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.մարտի 12

գ.Առինջ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 207-Ա

**ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ  
ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԶՈՒԳԱՐԱՆԻ, ՊԱՐՄՊԻ  
ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳԵՐԱՍԻՄ ՀՈՒՍԻԿԻ ԴԱԼԱՔՅԱՆԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Գերասիմ Հուսիկի Դալաքյանի (ծնված 1984 թ) լիազորված անձ Հուսիկ Գերասիմի Դալաքյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, օժանդակ շինությունը, զուգարանը, պարիսպը և դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**.

1. Վերականգնել Առինջ համայնքի 13-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող քաղաքացի՝ Գերասիմ Հուսիկի Դալաքյանին սեփականության իրավունքով պատկանող 0,16 հա մակերեսով օրինական տնամերձ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված S=473.5քմ մակերեսով բնակելի տան, S=141.15 քմ մակերեսով օժանդակ շինության, S=1.23քմ մակերեսով զուգարանի և S=9.52քմ մակերեսով պարսպի և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 0,006256 հա մակերեսով հողամասի սեփականության իրավունքները:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Գերասիմ Հուսիկի Դալաքյանի սեփականության իրավունքներն ամրագրված բնակելի տան, օժանդակ շինության, զուգարանի և պարսպի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Իշխանի Հովսեփյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



*(Signature)*

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 208-Ա

### ՔՐԻՍՏԻՆԵ ԼԵՎՈՆԻ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ, 219<sup>1</sup>-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով համայնքապետարանի գլխավոր մասնագետի կողմից 2020թվականի մարտի 10-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ N 14 արձանագրությունը **.ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ /անհատական բնակելի տուն/ ինքնակամ կառուցելու համար Քրիստինե Լևոնի Աբրահամյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝100 000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով:
- 2.Քրիստինե Լևոնի Աբրահամյան պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Առինջի համայնքապետարանի 900105204102 հաշվեհամարին:
- 3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Առինջ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինե Լևոնի Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. մարտի 12  
գ.Առինջ



*[Signature]*

Ստաց. 13.02.20.

*[Signature]*



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 209-Ա

### ՎԱՋԵ ՌՈՔԵՐՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ, 219<sup>1</sup>-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով համայնքապետարանի գլխավոր մասնագետի կողմից 2020թվականի մարտի 10-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ N 15 արձանագրությունը **.ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Սեփականության կամ հոդօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ /անհատական բնակելի տուն/ ինքնակամ կառուցելու համար Վաջե Ռոքերտի Բաղդասարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝100 000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով:
- 2.Վաջե Ռոքերտի Բաղդասարյանը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Առինջի համայնքապետարանի 900105204102 հաշվեհամարին:
- 3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Առինջ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաջե Ռոքերտի Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.մարտի 12





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 210-Ա

### ՌՈՄԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ, 219<sup>1</sup>-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով համայնքապետարանի գլխավոր մասնագետի կողմից 2020թվականի մարտի 11-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ N 16 արձանագրությունը **.ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար Ռոման Արտաշեսի Մելիքսեթյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ 400 000 (չորս հարյուր հազար) դրամի չափով:
- 2.Ռոման Արտաշեսի Մելիքսեթյանը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Առինջի համայնքապետարանի 900105204102 հաշվեհամարին:
- 3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Առինջ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոման Արտաշեսի Մելիքսեթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*(Handwritten signature)*

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. մարտի 12  
գ.Առինջ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru  
,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 211-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Առինջ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 24-ի թիվ 59-Ն որոշումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 24-ի «Առինջ համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 59-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումը.

- 1/ 2020թ-ի բյուջեի բաժին 01 խումբ 01 ծրագիր 01 4212 հոդվածի երկրորդ եռամսյակից <<5,0>>թիվը տեղափոխել առաջին եռամսյակ
- 2/ 2020թ-ի բյուջեի բաժին 06 խումբ 04 ծրագիր 01 4212 հոդվածի երկրորդ եռամսյակից <<5,0>>թիվը տեղափոխել առաջին եռամսյակ
- 3/ 2020թ-ի բյուջեի բաժին 08 խումբ 02 ծրագիր 03 4261 հոդվածի երրորդ եռամսյակից <<900,0>>թիվը տեղափոխել առաջին եռամսյակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.մարտի 16  
գ.Առինջ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 212-Ա

### ՎԱՀԱՆ ԿԱՐԵՆԻ ԶԻՐՈՒԽՉՅԱՆԻՆ, ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ ԲԱՔԱՋԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N-596-Ն որոշման 1-ին կետով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ՝50-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վահան Կարենի Զիրուխյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Վահան Կարենի Զիրուխյանին, Լիլիթ Արմենի Բաբաջանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Պարույր Սևակի թաղամաս 15-րդ փողոց1-ին նրբանցք թիվ 7 հասցեի հողակտորում տալ երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման թույլտվություն:

2.Պարտավորեցնել քաղաքացի՝Վահան Կարենի Զիրուխյանին, Լիլիթ Արմենի Բաբաջանյանին

1)Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, առնվազն երեք օրվա ընթացքում, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N 5 ձևի:

2) մուծելու սահմանված տեղական տուրքերը:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Հովսեփյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 213-Ա

### ՍԻՓԱՆ ԱՍԼԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ,ԱՍԼԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N-596-Ն որոշման 1-ին կետով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 50-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վահան Կարենի Զիբուխյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Վահան Կարենի Զիբուխյանին, Լիլիթ Արմենի Բաբաջանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Պարույր Սևակի թաղամաս 15-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեի հողակտորում տալ երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման թույլտվություն:

2.Պարտավորեցնել քաղաքացիՎահան Կարենի Զիբուխյանին, Լիլիթ Արմենի Բաբաջանյանին

1)Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, առնվազն երեք օրվա ընթացքում, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N 5 ձևի:

2) մուծելու սահմանված տեղական տուրքերը:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Հովսեփյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. մարտի 16  
գ.Առինջ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru , arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 214-Ա

### ԱՐԹՈՒՐ ԿՈԼՅԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ, ԱՇՈՏ ԿՈԼՅԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ, ՎԻԿՏՈՐՅԱ ԱՇՈՏԻ ՄՈՒՂՆԵՑՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N-596-Ն որոշման 1-ին կետով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 50-Ն որոշմամբ և հաշվի առնելով Արթուր Կոլյայի Ալեքսանյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Արթուր Կոլյայի Ալեքսանյանին, Աշոտ Կոլյայի Ալեքսանյանին, Վիկտորյա Աշոտի Մուղնեցյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Խաչատուր Աբովյան թաղամաս 29-րդ փողոց թիվ 8 հասցեի հողակտորում տալ երկհարկանի բնակելի տան և պարսպի կառուցման թույլտվություն:

2.Պարտավորեցնել քաղաքացի՝Արթուր Կոլյայի Ալեքսանյանին, Աշոտ Կոլյայի Ալեքսանյանին, Վիկտորյա Աշոտի Մուղնեցյանին

1)Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, առնվազն երեք օրվա ընթացքում, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N 5 ձևի:

2) մուծելու սահմանված տեղական տուրքերը:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Հովսեփյանի վրա:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 215-Ա

### ԷՌՆԵՍՏ ԱՊՐԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N-596-Ն որոշման 1-ին կետով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 50-Ն որոշմամբ և հաշվի առնելով Էռնեստ Ապրեսի Ղազարյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

- 1.Էռնեստ Ապրեսի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Առինջ համայնքի Պարույր Սևակի թաղամաս 1-ին փողոց թիվ 8 հասցեի հողակտորում տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման թույլտվություն:
- 2.Պարտավորեցնել քաղաքացի՝ Էռնեստ Ապրեսի Ղազարյանին
  - 1)Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, առնվազն երեք օրվա ընթացքում, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը, համաձայն N 5 ձևի:
  - 2) մուծելու սահմանված տեղական տուրքերը:
- 3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Տիգրան Հովսեփյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2020թ.մարտի 16  
գ.Առինջ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, Հեռ. (010) 61 45 01 Email arinj-hamaynk@mail.ru , arinj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՄԱՐՏԻ 2020թվականի N 216-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերով, Առինջ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ51-Ն որոշմամբ և հաշվի առնելով Ֆելիքս Թեմուրի Սիմոնյանի դիմումը. **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

